Գևորգ Սուրիկի Կոստանյան

Ծնվել է 1977թ. հոկտեմբերի 4-ին, Երևանում: Հանրակրթական դպրոցն ավարտելուց հետո 1994թ. ընդունվել և 1999թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

- 2006 թ. ուսումնառություն է անցել Մեծ Բրիտանիայի Նոթինհեմի համալսարանում:
- Ավարտել է ՀՀ ազգային ակադեմիայի փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի դոկտորանտուրայում:
- Ծառայել է ՀՀ զինված ուժերում 1999-2001թթ.:
- Նույն ժամանակահատվածում ընդունվել և սովորել է ԵՊՀ-ի հեռակա ասպիրանտուրայում, պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն:
- 1995-1999 թթ.՝ ՀՀ արդարադատության նախարարության օրենսդրության հարցերի վարչության առաջին կարգի խորհրդատու:
- 2001-2003 թթ.՝ ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական:
- 2002-2013թթ. դասավանդել է ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետում:
- 2003-2005թթ. դասավանդել է ՀՀ ոստիկանության ակադեմիայում:
- 2003-2004 թթ.՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ:
- 2006 թ.՝ ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական:
- 2006թ.՝ մարտի 14-ից՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:
- 2008-2011թթ.՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի օգնական:
- 2008-2011թթ.՝ ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի մոնիթորինգի հանձնաժողովի նախագահ:
- 2011-2013թթ.՝ ՀՀ զինվորական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ:
- 2013թ. մինչ օրս Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ:
- 2013-2016թթ.՝ ՀՀ գլխավոր դատախազ:
- 2004թթ. մինչ օրս՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:
- 2017թ. հունվարից մինչև ապրիլ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի խորհրդական:
- 2017թ. մինչ օրս՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր:

Իրավաբանական գիտությունների դոկտոր է, դոցենտ:

Արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական:

ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետի դիպլոմային աշխատանք՝ «Կաշառքը և դրա համար պատասխանատվությունը»:

Մեծ Բրիտանիայի Նոթինհեմի համալսարանի ուսումնառության թեման՝ «Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի իմպլեմենտացիան»:

Իրավաբանական գիտությունների թեկնածուական ատենախոսության թեման՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակը»:

Իրավաբանական գիտությունների դոկտորի ատենախոսության թեման՝ «Հայաստանի Հանրապետության դատարանների հայեցողությունը և դրա սահմանները Եվրոպական կոնվենցիոն կարգավորման համատեքստում (ձերբակալում, կալանավորում և արդար դատաքննություն)»:

Ամուսնացած է, ունի երկու զավակ: Անկուսակցական է: